

## Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

**1939 հունիս 20** Կազմակերպվում են ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի, մսի և կաթի արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատներ:

**սեպտեմբեր 15** Ակսվեց «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարությունը:

**հոկտեմբեր 20** Սոսկվայում բացվում է հայկական արվեստի տասնօրյակը:

**1940 մարտ 26** Ծահագործման է հանձնվում Երևանի Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանը:

**հոկտեմբեր 6** Բացվում է Երևանի բուսաբանական այգին:

**նոյեմբեր 24** Քիմնադրվում է Երևանի կենդանաբանական այգին:

**նոյեմբեր 24** Տեղի է ունենում Վ. Ի. Լենինի հուշարձանի հանդիսավոր բացումը Երևանի Լենինի հրապարակում:

**1941 ապրիլ 30** Երևանում վախճանվեց ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: (Ծնվ. 1865թ.-ին):

**մայիս 10** Սոսկվայում սկսվում է հայ գուականության տասնօրյակը:

**մայիս 25** Տեղի է ունենում Մոսկվայի համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի հայկական տաղավարի հանդիսավոր բացումը:

**հունիս 22** Նազիական Գերմանիան հարձակվեց Խորհրդային Սիոնության վրա: Սկսվեց Խորհրդային Սիոնության Հայրենական մեծ պատերազմի:

**հեկտեմբեր 1** Երևանում կազմավորվում է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան՝ գնդապետ Սիմոն Զաքյանի հրամանատարությամբ:

**1942 հունվար 11** Կերչի թերակղզում մարտական իրադրության մեջ ծևավորվում է 390-րդ հայկական դիվիզիան՝ գնդապետ Ս. Զաքյանի հրամանատարությամբ:

Հայաստանում գտնվող 409-րդ դիվիզիան, համալրվելով հայ ռազմիկներով ու սպաներով, դառնում է հայկական դիվիզիա՝ Ս. Վասիլյանի հրամանատարությամբ:

**մարտ 21** Երևանում մահացավ բանաստեղծ Վահան Միրաքյանը: (Ծնվ. 1866թ.-ին):

**ապրիլ 13** Հայաստանում ծևավորվում է 408-րդ հայկական հրաձգային գումարտակը:

**օգոստոս 15** Երևանից ռազմաճակատ մեկնեց 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան:

**սեպտեմբեր 21** Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան գրողնու տակ մարտական գործողություններ է սկսում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ:

**հոկտեմբեր 1** 408-րդ հայկական հրաձգային գումարտակը արյունահեղ մարտեր է մղում գերմանա-ֆաշիստական գորքերի դեմ Նովորոսիյսկի, ապա Տուապսի շրջաններում:

**1943 մարտ 30** Տեղի է ունենում

Խորհրդային Սիոնության հերոս Նելսոն Ստեփանյանի հանդիպումը Երևանի աշխատավորների հետ:

**ապրիլ 22** Երևան է ժամանում Ստալինգրադի պաշտպանության մասնակից 51-րդ գվարդիական դիվիզիայի (նախկին 76-րդ հայկական դիվիզիա) պատվիրակությունը:

**հունիս 20** Երևանում մահացավ ՀԽՍՀ ժողովրդական դերասանուհի Արուս Ուկանյանը: (Ծնվ. 1889թ.-ին):

**սեպտեմբեր 16** Գերմանական զավթիչների դեմ մղված մարտերում զոհվեց Խորհրդային Սիոնության հերոս Շունան Ավետիսյանը: (Ծնվ. 1914թ.-ին):

**հոկտեմբեր 9** Թանձնյան թերակղզու ազատագրման համար մղված մարտերում առավել աչքի ընկնելու համար, Գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով, 89-րդ հայկական հրաձգային գումարտակին շնորհվում է թամանյանի կոչում:

**նոյեմբեր 29** Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հանդիսավոր բացումը:

**1944 հունվար 8** 409-րդ հայկական դիվիզիան մասնակցում է Ուկրաինայի Կիրովոգրադ քաղաքի ազատագրմանը, որի համար Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով կոչվում է Կիրովոգրայյան:

**փետրվար 21** Իր մարտական ընկերների հետ Փարիզում գնդակահարվեց ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատի հրամանատար, կոմունիստ, բանաստեղծ Միհակ Մանուչյանը:

**մարտ 16** ՀԽՍՀ Գերագույն խորհրդի սեսիան որոշում է ընդունում ՀԽՍՀ պաշտպանության և ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատներ կազմակերպելու մասին:

**մարտ 18** Մարտաշարք է մտնում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը կառուցվելու էր արտասահմանյան հայերի հավաքած միջոցներով:

**ապրիլ 19** ՀԽՍՀ ժողովում խորհրդի կից ստեղծվում է ճարտարապետության գործերի վարչություն:

**օգոստոս 19** ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ Սերգեյ Խուլյակովին (Արմենակ Խանֆերոյանց) ավիացիայի մարշալ կոչում շնորհելու մասին:

**սեպտեմբեր 25** Երևանում մահացավ անվանի հայագետ, ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը: (Ծնվ. 1865թ.-ին):

**հոկտեմբեր 7** Երևանում մահացավ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ և գրող Միքայել Մանվելյանը: (Ծնվ. 1877թ.-ին):

**նոյեմբեր 20** Հիմնադրվում է արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությունը (ԱՕԿՍ):

**նոյեմբեր 29** Հանդիսավոր կերպով բացվում են Լոռու և Աղյամանի (Մարտունու շրջան) ջրանցքները:

(Հարունակելի)

Լուրեր ■■■

## Վախճանվել է Սիլվա Կապուտիկյանը



Երեւանում 87 տարեկան հասակում վախճանվել է հայտնի բանաստեղծուհի, հրապարակախոս եւ համարակական գործիչ Սիլվա Կապուտիկյանը: Նրա ստեղծագործությունները, որոնք սիրված են Հայաստանում եւ Սփյուռքում, բարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով: Սիլվա Կապուտիկյանը ակտիվորեն մասնակցել է Հայաստանի հասարակական կյանքին, հրապարակային ելույթներ ունեցել դարարայան շարժնան ժամանակ:

2004 թվականի ապրիլի 13-ի դեպքերից հետո, երբ Հայաստանի իշխանությունները բռնի ուժով ցրեցին խաղաղ ցույցը Բաղրամյան պողոտայում, Սիլվա Կապուտիկյանը ի նշան բողոքի հետ վերադարձեց իրեն շնորհված «Մեսրոպ Մաշտոց» շքանշանը: Բանաստեղծուհու հույսարկավորությունը կազմակերպելու համար ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորությամբ:

Սիլվա Կապուտիկյանի հույսարկավորությունը տեղի կունենա Երեւանի Կոմիտասի անվան այգու պանթեոնում:

Անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի մահվան կապակցությամբ ցավակցական ուղերձ է հղել նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Ուղերձում ասված է. «Մեծ ցավով տեղեկացա անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի մահվան մասին»:

Սիլվա Կապուտիկյանը հայ նորագույն գրականության ամենաականավոր ներկայացուցիչներից է, որի գեղարվեստական եւ հրապարակախոսական ստեղծագործությունները տասնամյակներ շարունակ ուղեկցել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի ընթերցողին: Թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում նա մեծ ժողովրդականություն էր վայելում իբրեւ իր երկրի ու ժողովրդի ճակատագրով մտահոգ մտավորական:

Սիլվա Կապուտիկյանի վախճանը մեծ կորուստ է մեր գրական ու հասարակական կյանքում: Ին անկեղծ

ցավակցությունն են հայտնում բանաստեղծուհու հրապարակություն եւ նրա արվեստի բազմահազար երկրպագուներին»:



Սիլվա Կապուտիկյան, 06.11.2005

### ԳՈՅԱՏԵՎԵԼՈՒ Է ՀԱՎԵՐԺ

Նա մեր ստեղծագործական միության լավագույն անդամն էր՝ արտահայտության ամենաընդգրկուն, համապարփակ առօւնով:

Սիլվա Կապուտիկյանը մեր իրականության խիզճն էր ու ոգին, որ հայրենանվիրության հավատամքին հավատարիմ մնաց ժամանակների բոլոր վայրիկերումների ընթացքում:

Մենք՝ հայ լրագրողներս, Սիլվա Կապուտիկյանի գործընկերները, խորապես սգալով հայ մեծ հրապարակախոսի անդամակի կորուստը, մեզ սփոփում ենք այն իրողությամբ, որ նրա ահօելի, անշափելի ժառանգությունը՝ հայ մշակույթի ամենաաշենչող փայլատակումներից մեկը, շարունակելու է ապրել, գոյատելու:

Ապրելու է, գոյատելու է այնքան, որքան հայ ժողովուրդը:

Այսինքն՝ հավերժ:

**Հայաստանի ժուռալիստների միություն**

### ՎԵՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մեծ բանաստեղծուհի, հայ ժողովրդի արժանավոր դուստր Սիլվա Կապուտիկյանի մահվան կապակցությամբ Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը վշտակցում է համայն հայության՝ ի Հայաստան եւ ի սփյուս, եւ ցավակցում բանաստեղծուհու որդուն՝ քանդակագործ Արա Շիրազին, ինչպես նաև մյուս հարազատներին ու բարեկամներին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՐԵՅԱՆ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

### ՎԵՐՍԱԳԻՐՆ ԻՆՔ Է ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Այսօր՝ տխուր ու ցավալի վերնագիր: Երեկ եւ 87 տարի, գրեթե ամբողջ 20-րդ դարաշրջանում՝ հպարտություն պատճառող վերնագիր մայր հայրենիքում եւ ի սփյուս աշխարհի ապրող հայերիս համար: Իսկ վաղը, որ յուրաքանչյուր գրողի ամենաադաման ժամանակն է՝ լի գրական բարձր ու խստագույն չափանիշների անխուսափելի կիրառությամբ, հույսի վերնագիր, որ նա կշարունակի

իր սիրտ ու մտքի տագնապներով, որոնք վերֆիզիկական են, մնալ ներկա ու գալիք ընթերցողներին սիրելի եւ նրանց հետ անցնել հարազատ ժողովրդի գոյատեւության դժվարին ճանապարհը: Արդեն իսկ վերնագրի այս երեք չափումները խոսում են Սիլվա Կապուտիկյան երեւույթի ծանրակշիր կարեւորության մասին թե մեր վերջին տասնամյակների հասարակական կյանքի պատմության մեջ եւ թե գրականության անդաստանում:

Գրասեղանիս տիկին Սիլվայի, որին լիաձայն կոչում էին Մեծ տիկին, այս տարի հրատարակված գիրքն է՝ «Վերջին զանգ», որ մի քանի օր առաջ ստացել են անձամբ նրանից: Նկատեցի. տիկին Սիլվա, վերնագիրը սխալ է, ինչո՞ւ վերջին... 87 տարեկան երեխայի պես ժպտաց, հետո տիսրեց, ապա դարձյալ ժպտաց, (վկա՝ Պերճ Զեյթունցյանը).- դե, 60 գրքերից գոնե մեկը պե՞տք է լինի վերջինը, չէ...»

- Ոչ, - ասացի ես: Ցավոր սրտի, ես սխալվեցի, նա ճիշտ եղավ:

Ընդհանրապես, քիչ գրողներ կան՝ բոլոր գրականություններում, որոնց երկերն ուղղակիորեն հարաբերում են հասարակական կյանքի ալիքներին, վերջիններս էլ՝ նրա ստեղծագործությանը: Այսօր եւ այստեղ գեղագիտական բանավեճ չանենք՝ այս փոխադարձ ներթափանցումը լա՞վ է, թե ոչ:

Ես ընդամենը նշում են գրողական խոսքի այս տեսակը, որը եւ Սիլվա Կապուտիկյանին է: Իբրև ժողովրդյան գրող՝ հոգու մատը հասարակական զարկերակի՝ նրա ցավերի, տագնապների, ողբերգությունների վրա, նա մեր նորագույն գրականության մեջ բացառիկ-գլխավոր տեղ ու դերակատարում ունի եւ շարունակում է Արովյանից մինչև Պարույր Սեւակ ծզվող այն ճանապարհը, որի գրողները չներփակվեցին գուցե գայթակղիչ փողոսկրյա աշտարակում եւ մնացին «Հայոց լեռներում, Դըժար լեռներում, Արնոտ լեռներում, Սուլի լեռներում»:

Նկատե՞լ եք, այսօր որքան են շատացել հայրենասերները, բայց... խոսրով եւ ոչ գործողությամբ, կուրծք ծեծող հայրենասերներ, որոնց հայրենիքը իրենց պալատ առանձնատունն է, այգին շատրվանով ու արծաթափայլ եղենիներով: Սիլվա Կապուտիկյանը իսկական հայրենասեր էր, հայրենիքը ու ժողովուրդ սիրող, նրանց մեծ նվիրյալն ու ծառան: Նա եղավ խորհի ու ծշնարտության խորհրդանիշ՝ մեր անխիղճ ժամանակներում, ժողովրդի ու հայրենիքի դատապաշտապան թե արտաքին եւ թե ներսի դատապարություններում, նրա բանաստեղծական ու հրապարակախոսական բառը մի ամբողջ զորքի ուժ ուներ, եւ եթե չէր հաղթում՝ մեղքը նրանը չէր, այլ մեր խոլ ու հարմարվողական լսողությանը:

Համոզված եմ արտահայտած կլինեն համայն հայության վերաբերմունքը. Սիլվա Կապուտիկյանը հերանում է, Սիլվա Կապուտիկյանի զանգերը երկար են դողանջելու հայոց գրականության եւ հայ ժողովրդի պատմության քառուղիներում:

## ԽՈՐԱՅՐ ԱՐԱՄՅԱՆ

### Տեղական

Թագավորական կոսուս թասագարան բաց երկնքի տակ



Արդեն 4 ամիս Վանաձորի Թագավորական տեղանքում ընթանում են հնագիտական պեղումներ: Լոռու մարզպետարանի եւ Վանաձորի քաղաքապետարանի նախաձեռնությամբ սկսված հնագիտական այս աշխատանքները շատ կարեւոր են, որովհետեւ մարզում պեղումները երբեք ակտիվ բնույթ չեն կրել, չնայած Լոռի-Փամբակը շատ հարուստ է հնագիտական՝ մասնավորապես բրոնզի-երկարի դարերի հուշարձաններով. Որանք շատ լավ ուսումնասիրված են Սեւանի ավագանում, Շիրակում, Արագածոտնում, Արարատյան դաշտավայրում:

Թագավորականիստում հնագիտական աշխատանքները կազմակերպելու կապակցությամբ պայմանագիր է կնքվել ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության հնստիտուտի հետ:

Զբուցեցինք արշավախմբի պետ, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Բաղյալյանի հետ:

- Լոռու մարզում ծավալուն համակարգված հնագիտական աշխատանքներ կատարվել են միայն Ստեփանավանի մոտ, Լոռի-Բերդ հայտնի բրոնզեդարյան հնավայրում, ինչը հսկայածավալ նյութ տվեց՝ հարստացնելով ոչ միայն հայկական, այլեւ կովկասյան հնագիտությունը:

Դեռևս 1893 թ.-ից Թագավորականիստը հայտնի էր որպես հնագիտական հուշարձան: Բազմաթիվ այլ հուշարձաններ կան Վանաձորի Բազում, Դիմաց քաղանասերում (շինարարական աշխատանքների ժամանակ եղել են պատահական գտածներ), բայց Թագավորականիստն է այն հիմնական օջախը, որի ուսումնասիրությունը կամփուի Լոռի-Փամբակի հին մշակույթը:

Անցած դարի 50-60-ականներին թե Վանաձորի քանգարանի, թե՛ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության հնստիտուտի աշխատակիցները փոքրածավալ կարճաժամկետ ուսումնասիրություններ կատարել էին, բայց հուշարձանի վերաբերյալ անփոփ պատկեր չկար: Հնագիտական պեղումները Հայաստանում ակտիվացել են, մեր հնստիտուտի հնարավորությունները չեն կարող ապահովել Թագավորականիստի վեցամյա պեղումները: Մարզի իշխանությունների այս նախաձեռնությունը աննախադեպ էր՝ մեծ ծավալով հնագիտական աշխատանքներ իրականացնելու համար:

# Հոյս Ամսագիր

- Ի՞նչ էիք ակնկալում, եւ ի՞նչ տվեցին պեղումները:  
- Մեր պատկերացումներով Թագավորանիստը բազմաթիւ բրոնզեդարյա բնակատեղի էր, որտեղ պիտի լինեին մ.թ.ա. 3-րդ, 2-րդ եւ 1-ին հազարամյակների շերտեր: Ժամանակագրության առումով պատկերն այլ էր՝ բացված հնագիտական տվյալները վերաբերում են մ.թ.ա. առաջին հազարամյակին, այսինքն՝ անմիջապես հետուրարտական ժամանակին, որը հնագիտական գրականության մեջ կոչվում է Երկաթի լայն տարածման ժամանակաշրջան: Այն ժամանակ (մ.թ.ա. 8-4-րդ դդ.) Թագավորանիստը գրեթե ամբողջությամբ կառուցապատված էր: Այդ ուշ շերտերը վնասել են նախորդ՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի ինֆորմացիան, երբ, ըստ երեւութիւն, առաջին բնակեցումն է եղել Թագավորանիստում: Ծատ բարդ ռելիեֆ եւ մեծ տարածք ունեցող հուշարձան է Թագավորանիստը, ինչը պեղելու համար երկար ժամանակ է պետք: Այն Հայաստանի, միջոցե Կովկասի ամենախոշոր հուշարձաններից մեկն է: Այս ամիսներին մեծածավալ աշխատանք կատարվեց: Այժմ ավարտական փուլին ենք մոտենում. առնվազն մեկ ամիս կապահանջվի, որ բաց հատվածները (3 փոսորակ է արվել՝ 4x4 չափի) կոնսերվացվեն, որովհետեւ բաց երկնքի տակ ճարտարապետական մնացորդները (բացված պատերը եւ այլն) կվնասեն, դրանք պետք է ծածկել: Կշարունակենք պեղումները եւ, նախատեսվածի համաձայն, Թագավորանիստը կդառնա թանգարան բաց երկնքի տակ:

Ինչպես նշեցի, այն ամենը, ինչ բացվել է պեղումների ընթացքում (պատեր, տնտեսական-պահեստային նշանակության բազմաթիվ հորեր), վերաբերում է մ.թ.ա. առաջին հազարամյակին: Այն, ինչ տեսնում ենք, բավականին ակտիվ տնտեսական կյանքի մասին է խոսում:

Տապարիչ էր ժայռը հենապատող կառույցը: Գտածոների մեջ շատ էր քարե շինությունը՝ նախատեսված հացահատիկ աղալու համար:

Ո. Բաղայանը նշեց, որ բացված շերտերը հարուստ են այրված ծառերի մնացորդներով, ածուխով, ինչը մեծ տեղեկատու նյութ է հնագետի համար՝ ժամանակն առաջել ստույգ պարզելու նպատակով (կա, այսպես կոչված, ռադիոծիսածնային մեթոդ): Կարող են պարզել նաեւ ծառերի տեսակները՝ այդ ժամանակաշրջանում Լոռի-Փամբակի բուսական աշխարհի նախական պատկերացում ստանալու համար:

Հնագիտական նյութը, ինչպես նշեց դրկտորը, չի սահմանափակվում միայն ժամանակագրական պատկերը եւ մշակութային կապերը պարզելով, ներառում է նաեւ բուսական, կենդանական աշխարհի մասին տեղեկությունները: «Պեղումներից մեր ստացած ինֆորմացիան օբյեկտիվ է, հարուստ եւ մեծ ժամանակ կապահանջվի նյութի վրա աշխատելու համար», ասաց պարոն Բաղայանը:

Այս պեղումները հսկայական քանակի նյութ են տվել, որը, նախնական պայմանավորվածության համաձայն, պահպելու է տեղում (հատուկ նշակնան ենթարկվելուց հետո): «Բեկորված խեցելենը պետք է գրանցվի, մշակվի: Կպահի Լոռի-Փամբակի թանգարանում: Նույն հուշարձանի հավաքածուները ցրված են. մի մասը երեւանում է, մյուսը՝ Վանաձորում, 1893 թ.

նյութերն էլ, որքան տեղյակ եմ, թթվականում են: Ի մի բերելը ճիշտ կիհներ», ասաց Ռ. Բաղայանը:  
**ՄԱՍԿԵԼ ՄԻԿՈՅԱՆ**

## ՎԱԽՆԱՆՎԵԼ Է ՊԱՊԻԿ ՊԱՊՈՅԱՆԸ



77 տարեկանում վախնանվել է հայկական ֆուտբոլի անվանի վետերան Պապիկ Պապոյանը: Նա ծնվել է 1929 թ., Գյումրիում, որտեղ էլ իր ֆուտբոլային առաջին քայլերն է կատարել: Ավարտել է տնտեսագիտական եւ ֆիզկուլտուրայի ինստիտուտները: Պապիկ Պապոյանը ԽՍՀՄ սպորտի վարպետ է, 1950-60-ական թվականներին հաջողությամբ հանդես է եկել Գյումրիի «Շիրակում» եւ Երեւանի «Սպարտակում»՝ աչքի ընկնելով իր ատլետիկ կազմվածքով ու հուսալի խաղով: Երեւանի «Սպարտակի» կազմում ժամանակին նա փոխարինել է մեկ այլ ֆուտբոլիստի՝ Հայկ Կարմիրյանին: Պապիկ Պապոյանը մասնակցել է 1954թ. Կիեվի «Դինամոյի» հետ ԽՍՀՄ գավարի եզրափակիչ հանդիպմանը: Մեծ ֆուտբոլին հրաժշտ տալուց հետո նա երկար տարիներ, որպես Հայաստանի հավաքական թիմերի մարզիչ, աշխատել է Երեւանի ֆուտբոլի հանրապետական մարզադպրոցում: Վերջին 10 տարիներին անվանի վետերանը բնակվում էր ԱՄ-ում, դստեր մոտ: Սեպտեմբերի 3-ին նրա աճյունը կտեղափոխվի Հայաստան:

## ՄՐԱՋ



**ՄԱՐՏԻԿ ՏԱԲԱՏԻ ՊՈՂՈՍԵԱՆԻ**  
ցաւալի մահը, տեղի ունեցաւ յուլիսի 16-ին, 2006 թ.

## ՄԱՐՏԻԿ ՊՈՂՈՍԵԱՆԻ յիշատակին



Անբուժելի հիւանդութիւնը մէկ տարում ոչնչացրեց ստեղծագործող եւ միշտ նորարարութիւններ փնտրող ու ստեղծող ուղեղը եւ 2006 թվականի յուլիսի 16-ին ընդմիշտ մարեց Մարտիկ Պողոսեանի կեանքի ճրագը, որը 1928 թվականի յուլիսի 18-ին իր աղոտ եւ փոքրիկ լոյսով լուսաւորել սկսեց Հայկանուշ ու Տաճատ Պողոսեանների սիրտն ու կեանքը:

# Հոգս Ամսագիր

Մարտիկ Տաճատի Պողոսեանը ծնւել էր Սալմաստ գաւառի Յաֆթան գիւղում: Մեծ հայրը՝ Տ. Աշոտ քին. Պողոսեանը, շրջանի գործունեայ, ազդեցիկ եւ անվարան կուսակցական հոգեւոր հովիւն էր: Գաղափարական ծնողները իրենց ջանքերը չեն խնայում Յաֆթանի ազգային դպրոցում հայ մանուկներին հայեցի դաստիարակութիւն տալ: Նոյն պարտականութեամբ ծնողները տեղափոխում են Յամադան, ապա Նոր Զուղա եւ շարունակում իրենց ազգային, կրթական եւ կուսակցական գործունեութիւնը: 1937 թւականին ազգային դպրոցների վակւելով, կուսակցութեան կարգադրութեամբ, Տաճատ Պողոսեանն ընտանեօք հաստատում է Թեհրանում, որ բոլոր հայ երեխաների նման՝ Մարտիկն էլ ստիպած է լինում իր ուսումը շարունակել նախ պետական «Թամադդոն» տարրական դպրոցում, ապա՝ զրադաշտակաների «Ֆիրուզ Բահրամ» միջնակարգ դպրոցում: Ապա մտնելով կեանքի ասպարէ՝ հետեւում է Քաղաքային աւիացիայի միջազգային կազմակերպութեան ICAO-ի դասընթացներին եւ աւարտելով՝ աշխատանքի է անցնում Թեհրանի օդանաւակայանում որպէս օդային երթեւեկութեան հսկիչ եւ միաժամանակ վարում է «Թրումանի 4-րդ կտ» հաստատութեան փոխադրութեան բաժնը: 1952 թւականին ամուսնանում է Եռա Միքայէլեանի հետ եւ բախտաւորում՝ Արմենի ու Էմինի ծնունդով: Մի քանի տարի ընտանեօք հաստատում է Փարիզում: Ապա 1970 թւականից Թեհրանում սկսում է հրատարակել բելգիացի հեղինակ Ժորժ Ռ. Գ. «Թանթան եւ Միլու» (Tintin et Milou) մանկապատանեկան պատկերազարդ պատմւածքների ժողովածուն եւ այլ մանկական գրքեր՝ պարսկերէն լեզով, որոնց հրատարակութեան իրաւունքը գնել էր բելգիական «Casterman» շատ մեծ եւ ճանաչւած հրատարակչական ընկերութիւնից: Մարտիկ Պողոսեանը ճանաչում է մանկապատանեկան գրականութեան նախակարապետը եւ հիմնադիրը՝ Իրանում, որի մասին արձանագրուած է ընկերութիւնների գրանցման հիմնարկի պաշտօնական ատեաններում:

1973 թւականին հայրը ինքն իրեն հանգստի կոչելով՝ Մարտիկը մի ընկերութիւն է կազմուն եւ գնում է հօր «Մոդեռն» տպարանը: Գործն ընդարձակելով՝ տպարանն օժտուում է արդի տպագրական բոլոր յարնարութիւններով, որը դառնում է Թեհրանի առաջատար մեծ տպարաններից մեկը: «Մոդեռն» տպարանում են հրատարակել վերը յիշւած մանկա-պատանեկան գրքերը, հայերէն եւ մի քանի լեզուներով ամեն տեսակ պատէրներ եւ գրքեր: 1982 թւականին Տորոնտոյում (Կանադա) հիմնում է վարում է «Էլիզա» տպարանը՝ իր աւագ որդու՝ Արմենի օգնութեամբ: 1988 թւականին վերադառնում է Թեհրան եւ շարունակում «Մոդեռն»-ի տնօրէնութիւնը, որի անունը պետութեան պահանջով՝ փոխուում է «Զադիդ»-ի:

Յայաստանի անկախութեան եւ Թեհրանում ՀՀ դեսպանատան բացելու առիթով առաջարկում եւ սիրայօժար կերպով կատարում է բոլոր տպագրական պատէրները: 1993 թւականին քրոջ՝ Արմինէ Պողոսեանի մահից յետոյ ստանձնում է նաեւ

«Բաֆֆի» պատի եւ գրպանի օրացոյցների արտօնատիրութիւնը:

Սակայն, 1997 թւականին իր սիրասուն որդու՝ Էմինի մահը ուժգին հարևածում է նրա զգայուն հայրական սրտին ու յոգնած ջղերին եւ պարբերաբար քայլայում է նրա առողջութիւնը եւ վերջին մէկուկէս տարում գամում է ամկողնուն:

Մարտիկ Պողոսեանը չշեփորող բարերար էր: Ամէն

կերպ օգնել եւ աջակցել է հարազատ-բարեկամի եւ ծանօթի՝ առանց փոխհատուցման ակնկալիքի: Իր ծրագրերի ու որոշումների մէջ չափազանց հետեւղական էր եւ նպատակին հասնելու համար՝ ոչ մի ջանք չէր խնայում եւ յաղթահարում էր ամէն խոչընդոտ:

Միշտ զգտում էր աւելի լաւին, աւելի բարձրին:

**ԵՌԱ ՊՈՂՈՍԵԱՆ**

ԱՐԹԱՍՍԱՐԻ ՍԲ. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՑԱՍԱԾ ՍՈՒԹԱՖՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԿՂԻՄԻ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Օգոստոսի 24-ին «Ազգը», հենվելով թուրքական աղբյուրների վրա, տեղեկացրել էր, որ ավարտվել է Վանա լճի Աղբամար կղզու Սբ. Խաչ Եկեղեցու վերականգնումը եւ բացումը հոկտեմբերին կկատարի Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:


«Ենի շաֆար» թերթը սեպտեմբերի 1-ի համարում վերստին անդրադարձել է Աղբամարի Սբ. Խաչ Եկեղեցու բացմանը, նշելով, որ հոկտեմբերի սկզբին նախատեսվող բացման արարողությունը կազմակերպելու է Թուրքիայի մշակույթի նախարարությունը, արարողությանը, ներառյալ Յայաստանը, հրավիրվել են 20 երկրի մշակույթի նախարարները, եւ նաև ակադեմիաների թվում է լինելու Պոլսու հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը:

Թուրքական թերթի տվյալներով Մութաֆյան պատրիարքը հաշտության ուղերձ է հիելու Յայաստանին եւ Թուրքիային, իսկ այդ ուղերձը ուղիղ եթերում հեռարձակելու են բոլքական եւ հայկական «Կան» FM համանուն ռադիոկայանները միաժամանակ: Յեռարձակման առաջարկը ռադիոկայաններն են արել:

## ԱՐՁԱԽԻ ԹԵՄԸ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԻՑ 17 ՏԱՐԻ ԱԱՑ

### Յանդիպում Պարգևե արքեպիսկոպոսի հետ

Արցախ աշխարհի բնակչության ո՞ր տոկոսն է Յայ առաքելական Եկեղեցու հետեւորդ, միանշանակ դժվար է պնդել: Անգամ այն դեպքում, երբ թենը ամենակազմակերպվածներից մեկն է իր աչալուրջ առաջնորդի շնորհիվ: Յիրավի, Պարգևե արքեպիսկոպոս Մարտիկոսյանը մեր այն հոգեւորականներից է, որ վայելում է մեծ ժողովրդականություն եւ



սիրելին է բոլոր հավատացյալների: Թերեւս նրա հետեւորդները դա պայմանավորում են սրբազն հոր գործերով եւ ձեռնարկումներով: Շատերի կարծիքով նա Արցախի ոչ միայն հոգեւոր, այլև ֆիզիկական պաշտպաններից է եղել թե՝ արցախյան ազատամարտի տարիներին, թե մեր օրերում: Դանդիպումը Պարգեւ սրբազնի հետ նպատակ ուներ լուսաբանելու մեր թերթի ընթերցողների համար Արցախի թեմի վիճակը վերաբացումից 17 տարի անց, սակայն զրույցը բազմաբովանդակ ստացվեց: Խոսք գնաց եւ թեմի ու նրա խնդիրների, եւ մեղսավորների, եւ Հայ առաքելական եկեղեցու ծեսի ու խորիրդի, եւ հոգեւորականների ու հավատացյալների կարգապահության նասին:

«Արցախը պատմականորեն ունեցել է բավականին հարուստ հոգեւոր կյանք՝ Գանձասարի կարողիկոսություն եւ մոտ 5000 գործող վանք եւ եկեղեցի, պատմում է Պարգեւ սրբազնը: 1930-ական թվականներին բոլոր վանքերն ու եկեղեցիները փակվել են, եւ մինչև 1989 թվականն այստեղ տիրել է արեխտական մթնոլորտ: Նշյալ թվականին Վազգեն Ա կարողիկոսի հրամանով վերաբացվել է պատմական Արցախի թեմը, որտեղ էլ ծառայելու ենք կոչվել: Այսօր արդեն կառուցված եւ վերանորոգված մոտ 32 եկեղեցի եւ վանք կա մեր թեմում, շարունակվում են նորոգումն ու նորերի կառուցումը: Թեմն ունի 16 հոգեւորական, որ շատ քիչ է ծիսական համայնքների գործունեությունը»

շարունակական կազմակերպվածությամբ պահելու համար: Վերջերս ավարտվել է Գանձասարի վանքին կից ճեմարանի շենքի կառուցումը, որ Աստծո կամքը գուցե մյուս սեպտեմբերին կրացվի Վեհափառ հայրապետի օրինությամբ, ավելացնելով հոգեւոր ճեմարանների թիվը: Այս ճեմարանի բացմանը էլ կլուծենք հոգեւորականների պակասի խնդիրը: Թեմն ունի նաեւ քարոզական-դաստիարակչական կենտրոն, եկեղեցու երիտասարդաց միություն, եկեղեցասիրաց եղբայրակցության միություն եւ եկեղեցասիրաց մանկաց միություն, ինչպես եւ հայորդաց տներ: Բացի այդ, 1991 թվականից մինչեւ այսօր գործում է «Գանձասար» աստվածաբանական հրատարակչությունը, «Ռադիո Վեմ» 24-ժամյա ռադիոկայանը, որ շուրջ երկու ամիս է, ինչ Արցախում էլ է հեռարձակվում առավելույան 7-ից մինչև 24.00-ն»:

Պարգեւ սրբազնը պատմում է նաեւ Հ2 հեռուստաընկերությամբ հեռարձակվող վեցամյա տարեգրություն ունեցող «Հոգեւոր անվտանգություն» հաղորդաշարի մասին, որով «փորձում են ժողովրդի մեջ շրջանառվող տարրական հարցերին պատասխանել եւ կրոնական հարցեր լուսաբանել»: Արցախի թեմի առաջնորդի համար կարեւոր է այն հանգանաքը, որ այդ հաղորդումները դիտում են եւ մայր Հայաստանում, եւ Արցախում:

Արցախի թեմն ունի նաեւ մարդասիրական օգնության բաժին, որ սոցիալական հարցերով է զբաղվում եւ օգնում է հիվանդներին կարիքավորներին, ուսանողներին: «Քանի որ կարիքավորները բազմաթիվ են, մեզ շատ են դիմում օգնության համար, ասում է Պարգեւ սրբազնը եւ մտահոգված հավելում, ամենադժվարն այն է, երբ գալիս-օգնություն են խնդրում եւ դու այդ պահին ի վիճակի չես օգնելու:

Ամենածանրը մարդուն մերժելն է: Մինչդեռ մեր կարողությունները շատ սահմանափակ են: Երբեմն երբեմն մենք էլ շատ ծանր վիճակում ենք գտնվում եւ նույնիսկ աշխատավարձերի գումարն ենք դժվարությամբ հայթայթում», ասում է թեմակալ առաջնորդը:

Հայ առաքելական եկեղեցու ամենացավոտ խնդիրներից մեկի՝ աղանդների մասին խոսելիս Պարգեւ սրբազնը նշում է. «Յավոք, չկարողացանք երկաթ ու քարե պատով պատմեշել աղանդների մուտքը Արցախ: Մոտ տասը տարի դիմակայեցինք, բայց հնարավոր չեղավ կասեցնել: ճիշտ է, աղանդավորները մեծ քանակություն չեն կազմում, բայց պիտի փորձենք դարձի բերել մոլորյալներին եւ կանխել հոգեւորականը, որ առավել բարեկանագօնացական-խնամի ուղեգոնք է ընդարձակվում»: Ընդհանրապես, աղանդավորների մտահոգիչ խնդրի վերաբերյալ սրբազն հայրն ընդգծում է. «Աստված ասում է՝ առավել զգվելի է ինձ համար հոգեւոր շնորհյունը, որոնց շարքում նկատի ունի նաեւ կախարդությունը, մոգությունն ու աղանդավորությունը: Ասեմ, որ այդ մեղքերի համար ամենասարացման պատմիներն են սահմանված: Նշան ախտերը դիվային հոգիների լարած թակարդներն են, որ ֆիզիկական եւ հոգեկան կուրություն կարելի է համարել: Դրանից ազատվելու համար պետք է զղալ, ապաշխարել եւ դարձի գալ»:

Ի տարբերություն շատ բարձրաստիճան պատասխանատուների, Պարգեւ սրբազնը խոսուվանում է թե՝ աղանդավորների, թե՝ այլ դժվարությունների հաղթահարման բարդությունները, անկեղծորեն նշելով պատճառները: Ըստ սրբազնի, դա շեշտակիորեն եւ արդյունավետ գործող համապատասխան ուժերի ու լժակների բացակայությունն է, որոնք դեռ գտնված չեն:

Խորհրդին հաղորդ լինելու եւ ծեսը ձեւական պարտականության չվերածելու մասին

Սրբազնի հետ մտնում ենք Երեւանի եկեղեցիներից մեկը, ուր օրվա տարբեր ժամերին մարդկանց ելումուտը սովորական երեւույթ է: Մինչ հավատացյալներից ունաք աղորում են, մյուսները մոն են վառում, զրուցում կամ շրջում եկեղեցում կտկտացնելով կրունկները: Աղորքից հետո դուրս ենք գալիս, եւ փորձում են հանդես գալ այն մարդկանց հարցերով, որոնք կինչեցնեին նրանք, եթե եկեղեցու կարգապահությունը խախտելու համար դիտողություն ստանային:

- Սրբազն հայր, ծիսական արարողությունների ժամանակ շատերի դեմքի արտահայտությունից ենթարկվում է մի հարց՝ ինչո՞ւ են եկեղեցական ծեսերն այդքան երկար տեսում:

- Քանի որ կարեւորագույն եկեղեցական խորհրդներից է մկրտությունը, պատասխանս դրա միջոցով բացատրեն: Երկրային կյանքով մարդն ապրում է մոտ 70-100 տարի: Դրա համար նրա ծննդյանը մայրը պատրաստվում է նախ ինն ամիս, ապա բուն ծննդյան պրոցեսը՝ մոտ 10-15 ժամ: Մինչդեռ երեխայի մկրտությունը, որ խոստանում է նրան հավիտենական կյանք, տեսում է մոտ 30-40 րոպե եւ տեղի է ունենում կյանքում ընդամենը մեկ անգամ: Իսկ ինչ վերաբերում է եկեղեցական եւ

# Հոգս Ամսագիր

ընդհանրապես աշխարհի ամենամեծ ու կարելորագույն ծեսին՝ սուրբ պատարագին, ապա հավատացյալի համար այդ մեկուկես, երկու ժամը նույնիսկ քիչ է, քանի որ պատարագի ընթացքում մի քանի խորհուրդներ են կատարվում: Նա, ով հաղորդ է, հասկանում է, որ անեն կիրակի կամ տոն օր եկեղեցու բեմի վրա Քրիստոս Ծնվում եւ պատարագվում է, ապա հարուցյալ նրա մարմինը հաղորդության՝ զինու եւ նշխարի միջոցով մարմնի եւ արյան վերածված՝ դառնում կենդանի Աստծու հետ հաղորդակցվելու հնարավորություն: Իսկ նա, ով չի ընկալում պատարագի իմաստն ու խորհուրդը, ծանծրանում է:

- Շատ դեպքեր են պատահում, երբ մկրտչած երեխան կամ նոր պակված երիտասարդները փորձանքի են գալիս. Եթե եկեղեցու գորությունը մեծ է, ինչո՞ւ են օրինված մարդիկ փորձանքի գալիս:

- Պատճառներից մեկն այն է, որ այդ խորհուրդներն ու կարգեր՝ մկրտություն լինի, թե պսակ, կատարվել են մեխանիկորեն, առանց խորհրդի եւ ծիսական խորհրդավորությունն ըմբռնելու եւ ընդունելու: Մենք ունենք կատեխիզացիա՝ տարրական քրիստոնեական գիտելիքներ տալու պարտավորություն, որ ամեն ծիսակատար քահանա պետք է բացատրություններ տա, բացատրի ծեսի խորհուրդը հավատացյալին, ապա նոր անցնի ծիսական արարողությանը:

- Սակայն ոչ միայն շարքային մարդն է ծեւականորեն ու մակերեսային վերաբերվում հավատքին, այլև որոշ հոգեւորականները: Ի՞նչ պատիժ է սպասում այն քահանային, որը ծեսն իմիջիալոց է անում կամ կրծատում է:

- Զայրացուցիչ է Աստծու եւ անընդունելի՝ մարդկանց համար: Մեր թեմում բոլոր ծեսերը կատարվում են ծայրից ծայր, առանց կրծատումների: Ընդհանրապես աշխատում ենք պահանել ողջ ծիսական կանոնակարգը եւ բացառապես ըստ ընդունված կարգի ենք առաջնորդվում: Օրինակ, ոչ մի դեպքում չենք կատարում պսակի կարգ պահոց օրերին: Մինչեւ մարդիկ չիմանալով այդ ամենը, հարսանիք են նշանակում այդպիսի օրերին՝ մեղքի տակ ընկնելով եւ գցելով նաեւ հյուրերին: Մենք միշտ տեղեկացնում ու բացատրում ենք եկեղեցական կանոնները, որ հարսանքավորները անակնկալի չգան եւ իրենք էլ պահպանեն կարգը:

## Համասեռամոլությունը մերժելով մերժելի մեղք է

Հաշվի առնելով Պարգեւ սրբազանի աստվածաբանական ծանրակշիռ գիտելիքները, նրա մեկնաբանությունն ենք հարցում այնպիսի մի երեւութի մասին, որ վերջին տարիներին հատկապես մեծ հետաքրքրության, գովազդի եւ խրախուսանքի է արժանանում դրա տարածմանը նախատող ուժերի կողմից: Խոսքը համասեռամոլություն է:

- Սրբազն հայր, միասեռականությունը հիվանդությո՞ւն է, քե՞ մեղք:

- Եվ իհվանդություն է, եւ մեղք: Նախ եւ առաջ դա մեծ մեղք է, որ հետզհետե կրկնվելով ու շարունակվելով դառնում է իհվանդության առիք: Համասեռամոլությունը անընդունելի է Աստծու եւ եկեղեցու առաջ: Յին կտակարանով Աստված զանազան օրենքներ ու սահմանափակումներ է տալիս

մարդուն, արգելելով ուտել որոշ կենդանիների միսը, փորոտիքն ու ոտքերը: Ասվում է նաեւ, որ նրանք, ովքեր սեռական հարաբերության մեջ են մտնում դիակների, անասունների, նույն սեռի մարդկանց կամ երեխանների հետ, մեղք են գործում Աստծու աչքերի առաջ: Մեղքը չքավելը դաշնում է զանազան հիվանդությունների պատճառ:

- Շատ բժիշկներ ու հոգեբաններ խոսում են մարդու ֆիզիոլոգիական խնդիրների մասին, կապելով նրանց «յուրօդինակ» հակումները նաեւ բնական ֆիզիոլոգիայի հետ: Ինչպէ՞ս եք մեկնաբանում նրանց եզրակացությունները:

- Համասեռամուլ ոչ ոք չի ծնվում: Հասկանում եմ, որ կարող են ծնվել մարդիկ երկու հակումներով, որ իրենց նախնիների մեղքերի պատճառով են այդ վիճակում: Սակայն առողջ մտքի առկայության ուազքում նրանց հոգեբանությունը սեռական գերակշող հատկանիշներին համարժեք է զարգանում: Ինչ վերաբերում է համասեռամոլությանը, դա անհատական բարոյական մեղք է եւ բնության հետ ոչ մի կապ չունի:

- Գիտենք, որ համասեռամոլներին պասկելու օրինակներ կան Անգլիկան եկեղեցու կողմից: Իսկ մեր եկեղեցին եկումենիկ բարեկամություն է անում դրանց հետ: Մի՞թե դա թույլատրելի է:

- Այդ խնդիրի պատճառով Անգլիկան եկեղեցին բաժանված է երկու մասի: Եվ դա մեծ խնդիր է այդ եկեղեցու համար: Սակայն Հայ եկեղեցու սպասավորների էկումենիկ հարաբերությունների զարգացումը ավանդական անգլիկանների հետ է եւ ոչ համասեռամոլության կողմնակիցների: Համասեռամոլությունը մերժելով մերժելի է Հայ եկեղեցու համար:

## ՍՈՒՍԱՆՆ ՍԱՐԳԱՐՅԱՆ

## ԲԱՑԿԵՑ ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱՎԱՐ

Սեպտեմբերի 1-ը գրող, հրապարակախոս, արձակագիր Վարդգես Պետրոսյանի անվան թիվ 51 միջնակարգ դպրոցում կրկնակի տոն էր: Երեկ՝ գիտելիքի օրը, իրականացվեց դպրոցի տնօրենության եւ աշակերտության երազանքը՝ Արարկիր համայնքի աջակցությամբ բացվեց Վարդգես Պետրոսյանի դիմաքանդակը, որը այսօրվանից տեղադրված կլինի դպրոցի պատիճն: Դիմաքանդակի հանդիսավոր բացմանը ներկա էին գրողի դուստրը եւ ուրիշ հարազատներ, Արարկիր համայնքի թաղապետ Անդրանիկ Չահինյանը, փոխքաղաքապետ Կամո Արեյյանը, կրթության եւ գիտության փոխնախարար Արա Ավետիսյանը, մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Կարինե Խոդիկյանը, պատգամավոր Հրանուշ Հակոբյանը, գրողական եւ մտավորական շրջանակների ներկայացուցիչներ, որոնցից շատերը Պետրոսյանի ժամանակակիցն են եղել եւ հաճելի հուշեր ունեին պատմելու:

Քանդակագործ Էդվարդ Չախիկյանի կերտած դիմաքանդակի ներքո հավաքված աշակերտների խոսք ու երգից հետո Վարդգես Պետրոսյանի վաստակը հիշեցրին նրա գրող ընկերները եւ մտերիմները: Գրողների միության նախազան Լեւոն Անանյանը հատկապես շեշտադրեց Վարդգես Պետրոսյան ստեղծագործողի, հրապարակախոսի եւ

խնբագրի վաստակը՝ նշելով, որ հիշյալ քնազավաներում իր գործունեությամբ Պետրոսյանը շատ զարգացումներ է նետրել: ԳՄ նախագահի համոզմամբ, հրապարակախոսության մեջ Պետրոսյանը զարգացրեց Եւրացության մեջ մեծացությունը, հրապարակախոսության մեջ մեծացությունը հասարակական կյանքի կենսական տարածքը, իսկ «Գարուն» ամսագրի խնբագրի պաշտոնում նա հեղափոխություն մտցրեց մամուլի տարեգրության մեջ:

Երկու տարում քանդակված հուշարձանի մոտ ելույթ ունեցավ Վարդգես Պետրոսյանի թոռնութիւն՝ Մարինեն, որը սովորում է այդ դպրոցում, ինչպես նաև շնորհակալական խոսք ասաց դուստր՝ Արմինեն:

**ԳՐԱՄ ԳԵՎՈՂՐՁՅԱՆ**

## Հայաստանի նոր օրիներգի տարբերակները ներկայացվեցին հանրությանը

Հինգշաբթի երեկոյան Հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերով «Արամ Խաչատրյան» համերգասրահից Հայաստանի ֆիլիարմոնիկ նվազախմբի եւ Հայաստանի ակադեմիական երգախմբի կատարմանը ուղիղ եթերով հեռարձակվեցին Հայաստանի նոր օրիներգի առաջին փուլն անցած հինգ ստեղծագործությունները: Լուսմները հրապարակային էին. մուտքը բաց էր բոլոր ցանկացողների հանար:

Մարդկանց հետ գրույցներից հետո ստեղծված տպավորությունն այնպիսին էր, թե մրցույթի առաջին փուլը հաղթահարած տարբերակներից չորսը (բացի հանգույցայի եղանակից) բոլոր տարբերակները՝ հանրային կարծիքի առումով, հավասար հնարավորություններ ունեն: Բազմաթիվ էին նաև կարծիքները, թե լավագույնը ներկայիս օրիներգն է, որը թեև չի հաղթահարել մրցույթի առաջին փուլը, բայց որով, քանի որ այն Հայաստանի Հանրապետության գործող օրիներգն է, սկսվեց համերգը:

Ներկա սփյուռքահայերից շատերը հավանել էին Արամ Խաչատրյանի օրիներգը: «Որովհետեւ, գիտեք, նա է մեր համայնքի նշանը», - փաստարկեց սփյուռքահայ մի կին:

Սփյուռքահայ մի տղամարդ, մինչդեռ, հետեւյալ կարծիքը հնչեցրեց. - «Քիմն փոխելով ոչ մի բան չի փոխվում: Զեր կառավարությունը փոխեցեք, ուրիշ բան փոխեցեք»:

Հայաստանիների մեջ էլ բազմաթիվ էին Արամ Խաչատրյանի հեղինակած օրիներգի կողմնակիցները: Եղիշե Զարենցի «Ես ին անուշ Հայաստանի» բանաստեղծության բառերով գրված Տիգրան Մանսուրյանի օրիներգը նույնանու բազմաթիվ երկրագուներ ունի: «Վեց տարեկանից մինչեւ 96 տարեկան յուրաքանչյուր մարդ անգիր գիտի այդ խոսքերը», - փաստարկեց մի կին: Անենակարեւորը երեկով լուսմների ժամանակ ազգային ոգին էր, որ միավորել էր թե՛ երաժշտներին, թե՛ ունկնդիրներին, թե՛ օրյակում իրար կողքի նստած

մրցակից կոմպոզիտորներին, որոնք շատ բարյացակամ էին միմյանց համեմ: «Ես շատ ուրախ եմ, որ եղավ երգերի այսպիսի մի շքահանդես», - լրագրողներին ասաց Տիգրան Մանսուրյանը: - «Եվ կարծում եմ, որ հնչեցին այսօրվա մեր կոմպոզիտորական դպրոցի լավագույն ննուշները, լավագույն արտահայտությունները՝ իհարկե Արամ Խաչատրյանի շուրջը: Ես կարծում եմ, որ յուրաքանչյուր հայ կոմպոզիտորի համար այսօր մեծ պատիվ է գտնվել մի մրցույթի մեջ, որտեղ ներկա է Արամ Խաչատրյանը»:

«Եական չէ, թե մեր երգերից որ մեկը կարող է դառնալ Հայաստանի օրիներգը», - իր հերթին ասաց Ռոբերտ Ամիրիխանյանը: - «Հաղթող չի լինելու այստեղ. հաղթողը պիտի լինի մեր երկիրը»:

Գայանե Դամիելյան

## Լիբանանահայերը բողոքել են Թուրքիայի խաղաղապահների տեղակայման դեմ



Սի քանի հարյուր հայեր ցույց են անկացրել Բեյրութում ՄԱԿ-ի գրասենյակի առջեւ՝ բողոքելով ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի կազմում Թուրքիայի գործերի ընդգրկման դեմ: «Ֆրանսապես»-ի փոխանցմամբ, լիբանանահայերը նամակով դիմել են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանին հորդորելով նրան «լսել հայերի ձայնը, որոնք ակտիվ ուժ են լիբանանում, եւ արգելել թուրք զինվորների միանալը լիբանանում ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերին (UNIFIL)»: Ցույցի կազմակերպիչները նաև բաց նամակով դիմել են Թուրքիայի իշխանություններին, որուն, մասնավորապես, ասված է. - «Խաղաղապահ առաքելությանը մասնակցող երկրները պետք է չեզոք լինեն, ինչը չի կարելի ասել Թուրքիայի մասին, որը անվտանգության եւ ռազմական համագործակցության մասին համաձայնագրեր է կնքել Խորայելի հետ»: Երկուշաբթի օրը Թուրքիայի կառավարությունը լիբանան խաղաղապահներ ուղարկելու որոշում էր կայացրել՝ հատուկ շեշտելով, որ թուրք խաղաղապահները չեն մասնակցելու «Հըգբոլահ»-ի գինաթափնանը: